

ջերմեռանդութիւնը, որ միշտ երկար սաղմոսերգութեանց ներկա էր եկեղեցին, իւր աշխատասիրութիւնը, որ պարապ ժամ անցնել չէր գիտեր, այլ միշտ ծառայութիւն մը, գործ մը կը գտներ եւ կը կատարէր՝ վանահօր կարծիքը փոխեցին. մանաւանդ որ այդ ձմեռուան միջոցին այս տարուեցի տղայք կ'երթային որսի եւ իրենց յաջող նետածգութենէն ոչ թռչուն, ոչ կենդանի չէր ազատեր դիրութեամբ եւ կրօնաւորաց սեղանատունը ուտիք օրեր պատուական եւ համով կերակուրներով կը զարդարուէր: Վերջապէս ութ-տասը օրուան մէջ ար օտարականները այնպէս ընտանի եղան, որ վանքին փայտակիր, փայտահատ, ջրկիր, աւելաւու, դնապան այս մարդիկն էին. եւ օրաւոր հարկաւոր անձինք դարձեր էին վանքին մէջ: Պէտք է գիտնալ նաեւ, որ Կ'ոբայ վանքը Բլոոյ մը վրայ շինուած, մինչեւ այսօր դեռ ունի իր բարձրաբերձ պարիսպները, եւ եթէ եկեղեցուոյն գմբեթը շէկներ վրան բարձրացեալ՝ աւելի բերդ մը կը կարծուէր քան թէ վանք: Ս. Դանիէլի երունուոյն էր նուիրեալ եւ իւր մարմինը եկեղեցուոյն մէջ է թաղեալ մինչեւ այսօր: Տարուեցուոց կիրակի օրեր եկեղեցին բազմաթիւ երեւիլը չէր զարմացներ մեր վանականքը, վասնզի աշխարհք գիտեր, թէ Տարօն շատ չարչարուէր էր այդ մէկ-երկու տարուան միջոցին մէջ:

Մուշեղ իշխանին գլխաւոր ձմեռուան զուարճութիւն որսն էր. յաճախ որսական բարակներ եւ ութ-տասը թիկնապահներ հետ առած կ'երթար շրջակայքը որսալու: Ուստի նոյնպէս, երբ օր մը որսէ դառնալով Կ'ոբայ վանուց առջեւէն կ'անցներ՝ յանկարծ քանի մը հետեւակ տարուեցի դիմացն ելան, եւ մէկը լայնալիճ աղեղէն այնպիսի նետի հարուած մը տուաւ ձիուն փորին, որ կենդանին ցաւէն յիմար եալ ու կատաղեալ զարկաւ Մուշեղ ի գետին եւ ինք գնաց ինկաւ քանի մը մղոն հեռու եւ հոգին փչեց: Իսկ Մուշեղի թիկնապահները երբ իրենց տէրը տեսան ինկած եւ օգնելու դիմեցին այնպիսի նետածգութիւն մը իրենց դէմ սկսաւ, եւ թշնամի խումբը այնպէս շատցաւ եւ իրենց դէմ յարձակեցաւ, որ թողին փախան, եւ քանի մը հոգի նոյն միջոցին Մուշեղի ժամանակ չի տալով գետնէն ելնելու, ոտքերը ձեռքերը կապելովառին վանքը տարին, ուր իրենցմէ շատեր արդէն տանտեր դարձեր էին: